ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<< 14 >> սեպտեմբերի 2012թ. N 392

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՆԵՐՄԱՐԶԱՅԻՆ ԵՐԹՈՒՂԻՆԵՐԻ ՑԱՆԿՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի երրորդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի N762 որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետի 2-րդ ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի ներմարզային կանոնավոր երթուղիների կազմակերպման և անցկացման մրցութային հանձնաժողովի նախագահի 2012 թվականի սեպտեմբերի 5-ի զեկուցագիրը.

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի ներմարզային երթուղիների ցանկում լրացնել <<Վաղարշապատ-Արևաշատ>> միկրոավտոբուսային երթուղին:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2009 թվականի հոկտեմբերի 26-ի N145 կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովին (Հ. Կուրղինյան)՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում կազմակերպել ներմարզային <<Վաղարշապատ-Արևաշատ>> միկրոավտոբուսային երթուղու մրցույթ և արդյունքները ներկայացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ ***Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ***